

մաքուր ու սպիտակ երեսին վրայ ապա-
կանելու նշաններն սկսան տեսնուիլ .
կապոյտ բիծ մը գեղեցիկ ճակատը նսե-
մացուցեր էր :

Ինչ ատեն հառաչանքներն ու ողբերը
սկսան սաստկանալ , և Վետիրա անէն
դուրս ելաւ , որ յուղարկաւորութեան
պաշտօնէից իմաց տայ : Իսկ Ինաստա-
սիա , որպէս զի մարմինը հողուն աւան-
դելու աղէտալի վայրկեանը ուշացրնէ ,
հոտաւէտ խոտերով անկողինը ծած-
կեց , և վրան խնկաւէտ անուշահոտ եղ-
ցողեց , որուն հոտը ամեն դի տարածուե-
ցաւ , ու մեռելին չորս կողմը թանձրա-
ցած օդը ցրուեց . վերջը ճրագներուն
աղօտ լոյսը ու եռոտանւոյն կրակը ար-
ծարծեց , որուն մէջ խունկը կը ծխէր :

Երաժիշտներն եկան իրենց քօղա-
պատ պղնձէ նուագարաններովն , տաս-
նադեան ջնարներովն , և քաղցրահնչիւն
ու տխրաձայն փողերով : Եսոնց կ'ընկե-
րէին քաղցրաձայն տղաքներ , և լուտա-
սի ծաղկանց բոլորներովը պսակած օ-
րիորդներ . ամենքն ալ կարգաւ Սա-
րիամու հանգչած տեղւոյն դիմացը շա-
րուած , թաղելու վայրկենին տխուր
երգերը կը նուագէին . վասն զի առջի
ժամանակները քրիստոնեայք դեռ հը-
րէական պաշտամունքները պահած էին ,
միայն Խորհրդոց բաներուն մէջ անոնց-
մէ տարբերելով :

Տխրութեան ու ցաւոց ձայները սկը-
սան չորս կողմը լսուիլ . ան ատեն յան-
կարծ մօրը վրայ մէկ պաղ ցնցում մը ե-
կաւ . ու երբոր տխուր եղանակաց ձայ-
ները տարածուեցան , Սառա խռովեալ
բիբերը մէյմը իր վրայ դարձուց , վերջը
դանդաղութեամբ մը պաղած աչքերը
չորս կողմը պտըտցուց :

Կը շարունակուի :

ԱՅԼԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Պղատոնի Քարայրը :

Ելաբանութիւնը տեսակ մը առաս-
պելաբանութիւն է , որուն յատուկ է
զառարկան մտքով առած և պարզ կեր-
պով մը ուրիշ գաղափարի կամ բանի
մը նմանցընել : Եսանկ Վուպիդոնի նե-
տերովը , թեօք և մանկութեամբ ,
հինք ուղեցին սիրոյ կիրքը և անոր
բռնութիւնը այլաբանել : Եսպիսի
այլաբանութեամբք լի էր նախնի (Յու-
նաց կրօնքը . հին փիլիսոփայք ալ զա-
նազան գաղափարներ՝ այլաբանութե-
ք իրենց աշակերտացը կը հաղորդէին , և
մասնաւորապէս Պղատոն , ինչպէս իր
զարմանալի տրամախօսութեանցը մէջ
կը տեսնուի : Ես այլաբանութիւննե-
րէն ումանք իրեն հանձարին ծնունդն
են , ումանք ալ օտար ազգերէ առնուած :
() տար ազգերէ առնուած այլաբա-
նութիւն մըն է Երոս պամփիլաքուոյն
կամ հայկաղն Երային վրայ աւանդա-
ծը , որուն թարգմանութիւնը ուրիշ
անգամ ընծայեցինք : Հիմայ ալ կ'ու-
ղենք Քարայրի այլաբանութեան թարգ-
մանութիւնը դնել , որ աթենացի ի-
մաստասիրին ամենէն աւելի հանձարա-
ւոր և երեւակայութեամբ լի ստեղծա-
բանութիւններէն մէկն է , և Հասարա-
կապետութեան է գրոցը մէջ կը գտնուի :
Եւջի վեց գրքերուն մէջ Սոկրատ (ո-
րովհետեւ տրամախօսութեան ձևով շա-
րադրած է բոլոր գիւրքը) Վլաւկոնի
հետ երկար զրուցատրութիւն կ'ընէ ,
թէ ինչպիսի անձինք ընտրելու է , տէ-
րութեան գլուխ դնելու համար : Եւքն
Սոկրատ կը համարի թէ ոչ ոք կրնայ
աս պաշտօնս կատարել եթէ ոչ փիլի-
սոփաները և հանձարեղները . որով-
հետեւ անոնք միայն՝ իմաստասիրութե-
ք հաստատուն միտք և գաղափար ստա-
նալով , որ և իցէ բանէ չեն խռովիր ,
և արդար տեսութեամբ ընտրած բա-

ներնին այլոց կարծեացը չեն զոհեր :
Նաւասիկ այսպիսի անձինք պէտք են
օրէնքներ դնելու համար , որ իրենց ար-
թուն հսկողութեամբը կրնան հաստա-
տուն պահել սահմանուած կարգերը :
Սոկրատ աս իր կարծիքը հաստատելու
համար կը ցուցնէ թէ ինչ հետեանք
կրնան առաջ գալ 'ի գիտութենէ և 'ի
տգիտութենէ , և որչափ է իրենց ու-
նեցած ազդեցութիւնը մարդկանց սրը-
տին վրայ : Այլ իր միտքը լաւ մը բա-
ցատրելու և գիմացինին ըմբռնել տա-
լու համար հետագայ այլաբանութիւ-
նը կ'ընէ :

« Վամիցիս գիտել թէ քանի խտիր
ընդ պայծառութիւն և ընդ գեղ զգա-
լոյս այսորիկ և ընդ իմանալի լուսոյն
կայցէ : Համարեսջիր եթէ 'ի վիճ խոր
ամբոխ մարդկան 'ի շղթայս ծանունս
կաշկանդեալ կայցեն անշարժք ամե-
նեին՝ զհանդիպակայսն և եթ տեսա-
նելով , և յետկուսէ նոցա հեռագոյն ու-
րեք 'ի բարձունս հրատ բորբոքեալ կայ-
ցէ որոյ նշոյլք 'ի վիճ անդր ծաւալիցին .
և ընդ հրատն և ընդ վիճ որմ 'ի միջի
կացցէ՝ առ որով մարդիկ երթեկիցեն ,
կէսք լռելեայն և այլք զրուցատրելով
ընդ միմեանս , և 'ի ձեռս իւրեանց կեր-
պարանս մարդկան և անասնոց և ազգի
ազգի կահս բարձեալ բերիցեն՝ որոց
ստուերք 'ի կողմն վճին հանդէպ կա-
պելոյն նկարիցին : Այլ 'ի տեսիլ պատ-
կերացն շարժականաց պատրեալ նոցա ,
կարծիցեն զստուերսն էակս գոյաւորս ,
և նոցին իսկ զշարժմունսն և զկենդա-
նութիւն և զխօսսն համարեսցին : Վալ-
ցուք արդ զմի 'ի կապելոց աստի , և առ
'ի փարատել զպատրանս նորա՝ խզես-
ցուք զկապանսն , և յարուցեալ զնա
հայեցուցուք յետս : Ի տեսիլ նորոց ի-
րացն ապշեալ , յերկուասցի նա ընդ ճըշ-
մարտութիւն նոցա . և շուցեալ յակնա-
խտիղ նշուլից հրոյն , դարձուցէ զաչս
'ի բաց յանգոյ երևոյթսն՝ յորս յառա-
ջագոյն պշուցեալ կայր : Ենդրէն միւս-
անգամ մատուցուք զնա 'ի փորձ . բըռ-
նի 'ի վեր ձգեսցուք զնա 'ի վճէն , թէ-

պէտ և ճիցէ , թէպէտ ընդդէմ կբրի
ցի և տաժանաքայլ յառաջ մատիցէ :
Հասեալ 'ի վերայ երկրի՝ ընկճեսցի
անդէն 'ի պայծառութենէ տուրնջեան ,
և յաճախ զփորձ առեալ՝ հազիւ ապա
նշմարել կարասցէ զստուերս և զմար-
մինս և զաստեղս գիշերոյ , հայել յա-
րեգակն և խելամուտ լինել զի նա փո-
փոխէ զյեղանակս և արգասաւորէ զըզ-
գալիքս ամենայն :

Արպիսի ինչ արդեօք թուեսցին նմա
այնուհետեւ գովութիւնքն 'ի խորափոր
անձաւին ընծայեալք , որոց նախ տե-
սանիցենն և նկատիցեն զստուերսն ան-
ցաւորս . զինչ խորհիցի զսնապարծու-
թեանցն և զատելութեանցն և զնա-
խանձայուզութեանց , զորս զննութիւնք
ստուերաց դրդեն 'ի խաւարարգել ամ-
բոխ եղկելեայն : Վուրժ գորովոյ ստի-
պեսցէ զնա դիմել յօգնութիւն նոցա ,
և նշաւակել զսնոտի իմաստութիւնն և
զծաղրելի գիտութիւն . այլ քանզի 'ի
միջօրեայ պայծառութենէն 'ի խոր խա-
ւարն իսկոյն անցանելով՝ ոչ ինչ 'ի սկըզ-
բան անդ տեսանել կարէ , յարիցեն նո-
քա ընդդէմ նորա , և կշտամբեսցեն
զխարխափումն նորա , և համարեսցի
նա առ նոսա օրինակ ահաւոր 'ի ցոյց
վտանգին՝ որ պահի 'ի վերնագաւառ
անդր երթելոցն :

Նաւասիկ մերոյս դժնդակ պայմա-
նի ճշգրիտ պատկեր . անկեալ դնի ազգ
մարդկան 'ի լայնատարր վճի շղթայա-
կապ , պատաղեալ 'ի ստուերս ունայնս
և պատրողականս : Եստ բերկրութիւնք
դառնութիւնս ձգեն զհետ , ընչից խա-
բուսիկ է ճաճանչ , առաքինութեանց
խարխուլ են հիմունք , և նիւթակա-
նացս իսկ պատրիչ է գոյութիւն : Վարտ
է մեզ ելանել 'ի խաւարէ աստի , խոր-
տակել զշղթայս , ամբառնալ անխոնջ
ճգամբք 'ի գեր աշխարհն իմանալի ,
մօտել տակաւ 'ի գերաբուն իմացու-
թիւնն , և նկատել զաստուածային էու-
թիւն նորա անխուով 'ի զգայութեանց
և 'ի կրից : Հայնժամ լիցի մեզ տեսա-
նել՝ զի յաթոռոյ նորա իջանեն 'ի բա-
րոյական աշխարհն արդարութիւն և

գիտութիւն և ճշմարտութիւն, և 'ի բնականն՝ լոյս արեգական և արգասիք երկրի և գոյութիւն ամենայն էից։

Ս'իտք որ 'ի բարձրութիւնս յայս գամ մի ժամանեալ, զփորձ առնուցու զյուզ մանցն և զխանդից և զմայլմանց՝ զորս տեսիլ գերաբուն բարւոյն ներգործէ 'ի նմա, ոչ ևս խոնարհեցի յանձն առնուլ զճգունս մեր և զպատիւս։ և կամ 'թէ խոնարհեցի ևս առ մեզ, հարկ լիցի նմա մինչև սովորեալ 'ի խաւար մեր՝ պատմել զարդարութիւն որոց զստուերս և եթ նորա ճանաչեն։ և նորալուր բանք նորա այնպէս անհետեւեթ 'թուեսցին և փնասակարք, մինչև ծաղր առնել զնա ամենեցուն իբրև զյիմար ոք, կամ որպէս զյանդուզն պատուհասել։

Սակայն այսպիսիս պարտ է գոլ ի մաստնոցն մերոց՝ որք 'ի գլուխ հասարակապետութեանն կացցեն, և այսպիսիս պարտ է բանականին կրթել զնոսա մակացութեան։

Օ ամս հինգ պարապեալ նոցա յուսումն նորին, խոկացեն յետութիւն ճշմարտութեան և արդարութեան և պատշաճից։

Ս'ի զտարտամ և զանստոյգ զայժմու որ առ մեզս ծանօթութիւն շատ համարեսցին, այլ զբուն զսկիզբն նոցա հետազօտեսցեն։

Մի ընթերցմամբ պատուիրանաց մարդկան ուսցին զպարտս իւրեանց, այլ 'ի հրահանգաց՝ զոց անդստին յանսկիզբն էէն ընդունին։ և իբր անընդմէջ ընդ նմա խօսակցութեամբ ընկալցին զանսխալ գիտութիւն հասու լինելոյ ճշմարտութեան, զարիութիւն անդրդուելի 'ի կորովել զարդարութիւն, և զգեղեցիկ յամառութիւնն առնելոյ զբարի՝ որում ոչ ինչ կարէ յաղթել, և որ ամենայնի յաղթէ 'ի սպառ։

Սյլ մինչ նոքա բոլորովին ընդ գերաբուն բարւոյն միացեալ, և զճշմարիտ կեանսն կելով, զերևելիքս ամենայն 'ի մոռացօնս դարձուսցեն, հասարակապետութիւնն որ իշխէ առաքինութեանց նոցա՝ կոչեսցէ զկէսս 'ի նոցանէ 'ի գործ պատերազմի, զայլս 'ի պատշաճ իւրաքանչիւր հասակին։

Սարձեալ վերստին փորձեսցէ զնոսա մինչև

հասցեն 'ի յիսուն ամ տիոցն։ և ապա վերառեալք ականայ 'ի բարձրագոյն աւագութիւն, ևս քան զևս մերձեսցին ըղձիւք յէն գերաբուն, և 'ի նմանէ ուղղեսցին։

Սյնուհետև իմաստասիրութեամբ ընդ երկինս կցորդեալ, և աւագութեամբն ընդ երկիր, լուսաւորեսցեն զքաղաքացիս իւրեանց, և բարեբաստս զնոսա յարդարեսցեն։ և յետ մահուն իւրեանց կեցցեն 'ի յաջորդս հրահանգեալս բանիւք և գործովք նոցա, և աշխարհն շնորհապարտ կանգնեսցէ նոցա շիրիմս, և կարդասցէ զնոսա շահապետս իւր։

Սպա ուրեմն իմաստասէրքն, զորս կացուսցուք իշխանս 'ի վերայ հասարակապետութեանս մերոյ, մի իցեն որպէս զճամարտակողսն անգործս և իբրև զիմաստական արհամարհս յաչս ժողովրդեան՝ անկարողք առաջնորդել նմա։

Սյլ իցեն անձինք արիասիրտք, մեծախոհք, պարապեալք յօգուտ և եթ աշխարհին, քաջամուտք ամենայն մասանց առաջնորդութեան երկար վարժիւքն և վեհ և վսեմ տեսականան նորին գիտութեամբ, և առաքինութեամբքն իւրեանց և մակացութեք՝ պատկերք և թարգմանք դիցն 'ի վերայ երկրի։

Սլ վասն զի հասարակապետութեանս մերոյ անձուկ լիցին սահմանք, կարասցեն նոքա 'ի կշիռ ականունել զամենայն կողմանս նորա։

Սաստ իշխանութեան նոցա մեծարեալ յամենեցունց, պատսպարան իւր կալցի 'ի կարևոր ժամանակի զգունդ անպարտելի և խաղաղասէր զօրականին, որ ոչ այլ ինչ իւր պարծանս խնդրեսցէ՝ բայց միայն պահ ունել օրինաց և հայրենեաց։

Սողովուրդն կեցցէ երանաւետ 'ի միջասահման այլ յանկապուտ բախտի։ զօրականն զերծ յառտնին հոգոց, և փառաւորեալ 'ի մարդկանէ արութեամբքն իւրովք։ և աւագանին 'ի բերկրանս բարերարութեան, և ունելոյ այնմ վկայ զգերաբուն էն։

Սհաւասիկ ասիկայ է Սարայրին այլաբանութիւնը, և Սոկրատայ տուած

զարմանալի մեկնութիւնը : Վլաւկոն անով աղէկ ըմբռնեց , թէ որչափ մեծ ազդեցութիւն ունի գիտութիւնը կամ տգիտութիւնը մարդկութեան վրայ . յայտնապէս տեսաւ դարձեալ թէ ճշմարիտ իմաստութիւն ստացողներն են միայն արժանի տէրութիւն առաջնորդ ըլլալու : Սակայն Պղատոն Սոկրատայ բերնովը զարմանալի հանձարով մը՝ նոյն իսկ այս իմաստութիւնը ստանալու համար՝ դժուարին արգելք մը մէջ կը բերէ : Եւ ատ մարդիկ , կ'ըսէ , որ գերագոյն ճշմարտութիւնս ճանչնալու բաղդը ունեցան , խիստ քիչ անգամ փոյթ կ'ընեն երկրաւոր թշուառ կենաց վըրայ անդրադարձութիւն ընելու , և ծանր գործոց և աշխատութեանց ձեռք զարնելէն ետ կը քաշուին : Եւ մարդիկը , կ'ըսէ Պղատոն , կը կարծեն թէ Լքրանեւաց կղզիներուն մէջ կ'ապրին , բայց հանդերձ այնու հարկ չէ որ գործողութիւններն ալ ըստ բախտին վառուին : Եւ թէ տէրութեանց կառավարութիւնը ընելու յարմար չեն այն մարդիկը որ դաստիարակութիւն չեն ունեցած , և կարեւոր ճշմարտութիւնքը ճանչնալու անփոյթ , հաւասարապէս անյարմար են նաև անոնք որ բոլոր կեանքերնին ուսման զբաղելով կ'անցընեն : Սիւսն ընտիր անձանց ձեռքը յանձնելու է պետութեանց տեսչութիւնը : Եւ այց որոնք են արդեօք փնտռուած այս ընտիր անձինքը . — Եւնք որ քիչ ատենի մը մէջ իրենք զիրենք բարձրացընելէն և գիտութեան բարիքը ձեռք ձգելէն ետքը , նորէն կը դառնան աշխարհքիս թշուառութեանցը կարեկից ըլլալու . անոնց աշխատութեանցը մասնակից են , և կերպով մը կը մօտենան անոնց գերութեան շղթանին քակելու , աչքերնին բանալ և կամաց կամաց արդարութեան և ճշմարտութեան փառաւոր ճամբաները առաջնորդելու :

տնտեսական

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Թափչոքիւն¹ :

Թափչութիւնն արուեստ է , որով բամբակի , կանեփոյ , քթանի , բրդոյ և մետաքսի վրայէն գունաւորիչ նիւթը կամ աղտեղութիւն սեպուած գոյնը թափել կու տանք զանոնք ճերմկցընելու և յետոյ անոնց ուղած գոյներնիս տալու համար : Բուրդն ու մետաքսը աւելի սերտ միացած են գունաւորիչ նիւթոց հետ , անոր համար զանոնք գունաթափելը աւելի դժուար է : Եւս հինգ նիւթոց ճերմկցընելու եղանակը իրարմէ տարբեր ըլլալէն զատ , զամեն մէկը ճերմկցընելու եղանակն ալ կը կախուի ետքի ընելու գործողութենէն . ուստի այս հատուածիս մէջ ամեն մէկուն վրայ առանձինն խօսինք : Եւ ընտիր ատենները բամբակէ լաթերը , կանեփէ ու քթանէ կը տաւները ճերմկցընելու համար հասարակ ջրով կը թրջէին զանոնք ու արեւու կը փռէին . չորնալէն ետքը նորէն կը թրջէին ու նորէն արեւու մէջ կը չորցընէին այնչափ անգամ ինչուան որ բոլորովին ճերմկի . բայց ետքի ատենները՝ փոխանակ հասարակ ջրով թրջելու՝ սկըսան մոխրաջրով թրջել այլ և այլ անգամու արեւու մէջ չորցընել : Եւս կերպով իրաւ լաթերը ու կտաւները կը ճերմկին , բայց շատ ժամանակ կը կորսուի . գործողութիւնը փութով կը կատարի թէ որ թրջելու ջրին մէջ քիչ մը քլոր կամ կիրի քլորաւոր խառնուի : Բլորը իրաւ շուտ մը կը գունաթափէ , բայց մեծ զգուշութիւն ընելու է որ քլորաջուրը սաստիկ չըլլայ , ապա թէ ոչ՝ լաթերը կ'այրէ : — Իսկ բուրդին ու մետաքսին գունաւորիչ նիւթը իւղային կամ խժային ըլլալով՝ զիրենք գունա-